# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվականի N 0211-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 10122019-06-0015 վկայականը, սեփականատեր՝ Կարապետ Հայկի Լալայանի դիմումը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագծերը. ***որոշում եմ***

1. Փամբակ համայնքի Արջուտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 06-019-0068-0015 կադաստրային ծածկագրով 0,2268 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը տարանջատել երկու գույքային միավորների՝ 0,1134 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և 0,1134 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի՝ համաձայն «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված տարանջատման հատակագծի:

2. 06-019-0068-0015 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,1134 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել՝ Փամբակ համայնք, գյուղ Արջուտ, 6-րդ փողոց, 1/1 հողամաս փոստային հասցե:

3. 06-019-0068-0015 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,1134 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել՝ Փամբակ համայնք, գյուղ Արջուտ, 6-րդ փողոց, 1 հողամաս փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ս. ԱՆԱՆՅԱՆ**

12 փետրվարի 2025
գ. Փամբակ